Թիվ 8 արձանագրություն
28.09.2022

# ՀՀ ԿԳՄՍՆ Լոռու մարզ

# <<Նորաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

*2022-2023ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան*

Scanned by TapScanner

| | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Պատասխանատու անձ | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Գլուխ 1<br>Մանկավարժական խորհրդի աշխատանքային տարեկան պլան<br><br>1-ին նիստ | | | |
| 1. | 2020-2021ուստարվա արդյունքների ամփոփում և 2022-2023 ուստարվա խնդիրները կապված ՀՀ Գիտության և Կրթության նախարարության 2007թ. որոշումների, 12-ամյա կրթության և միջնակարգ դպրոցի խնդիրների հետ:<br>/Ա. Բաղալյան/ | 30.08.2022թ. | Ռ. Մարտիրոսյան | |
| 2. | Աշնանային վերաքննությունների և ամառային առաջադրանքների արդյունքների ամփոփում:<br>/Ա. Բաղալյան/ | | | |
| 3. | 2022-2023ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի մասին:<br>/Ռ. Մարտիրոսյան/ | | | |
| 4. | Փոխտնօրենի տարեկան աշխատանքների պլանների հաստատում: | | | |
| | 2-րդ նիստ | | | |
| 1. | 2022-2023ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքները և 2-րդ կիսամյակի խնդիրները: | | Ռ. Մարտիրոսյան | |
| 2. | Դպրոցի տնօրինության կողմից տրված ստուգողական գրավոր աշխատանքների արդյունքների (հ. Լեզու, ռ. Լեզու, մաթեմատիկա) մասին:<br>/Լ. Մամիկոնյան, Մ. Գրիգորյան/ | | | |
| 3. | Տարվա <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթին մասնակցության մասին: | | Ռ. Մարտիրոսյան | |
| | 3-րդ նիստ | | | |
| 1. | 2022-2023 ուստարում 120-200 ժամ դասերից բացակայած աշակերտների համար ուսպլանով նախատեսված առնվազն 5 առարկաներից քննություններ հանձնելու մասին: | | | |
| | 4-րդ նիստ | | | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | 2022-2023 ուստարվա 9-րդ և 12-րդ դասարաններում օտար լեզու և բնագիտություն առարկաներից այլընտրանքային քննությունների մասին: /Ռ. Մարտիրոսյան/ | 26.05.2023թ. | Ռ. Մարտիրոսյան | |
| 2. | 2022-2023 ուստարվա քննական հրահանգին ծանոթացնելու մասին: /Ռ. Մարտիրոսյան/ | | | |
| 3. | 2022-2023 ուստարվա քննական հանձնաժողովների կազմի մասին: /Ռ. Մարտիրոսյան/ | | | |
| 4. | Դպրոցի տնօրինության կողմից տրված ստուգողական աշխատանքների / հ. Լեզու, մաթեմատիկա, ռուսաց լեզու/ արդյունքների մասին: /Ա. Բաղալյան/ | 25.05.2023թ. | Ռ. Մարտիրոսյան | |
| | **5-րդ նիստ** | | | |
| 1. | 2022-2023 ուստարվա 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտներին քննություններից հետո փոխադրելու և հիմնական կրթության վկայականներ և միջնակարգ կրթության ատեստատներ հանձնելու մասին: /Ռ. Մարտիրոսյան/ | 27.06.2023թ. | Ռ. Մարտիրոսյան | |
| | **6-րդ նիստ** | | | |
| 1. | 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների արդյունքների մասին: | 24.06.2023թ. | Ռ. Մարտիրոսյան | |
| 2. | 2022-2023 ուստարվա 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտներին հիմնական և միջնակարգ կրթության վկայականներ հատկացնելու մասին: /Ռ. Մարտիրոսյան/ | | Ռ. Մարտիրոսյան | |
| 1. | **Գլուխ 2** ՀՀ-ում կրթության և գիտության բարեփոխումների ծրագրին համապատասխան դպրոցի միջոցառումների պլան: 2011-2012 ուստարվանից ուսուցիչների ատեստավորման գործընթացը պատշաճ մակարդակով և այդ գործընթացի կարգին համապասխան կազմակերպելու համար առաջիկա 5 տարիների | | | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համար ուսուցիչների քանակության 20%-ի յուրաքանչյուր տարվա համար կազմել գրաֆիկ և 2022թ. ներքոհիշյալ ցուցակը ներկայացնել ՀՀԿԳՄՍՆ-ի հանրակրթության վարչության, վերապատրաստումներին մասնակցելու և ատեստավորվելու համար: | | | |
| 2. | Մինչև 2023թ. մայիսի 20-ը կատարել դպրոցի պարտուսի հասակ ունեցող / 5-ից մինչև 9-րդ դասարանը ներառյալ/ երեխաների հաշվառում, իսկ օգոստոսի 16-20-ը՝ վերահաշվառում: | | | |
| 3. | Ըստ կրթության ազգային ինստիտուտի կազմած գրաֆիկի ներկայացնել ուսուցիչների ցուցակները, ովքեր պետք է նոր ծրագրերին համապատասխան վերապատրաստումներին մասնակցեն: | | | |
| 4. | Պարտուսի հասակ ունեցողներին ընդգրկել դպրոց և պատշաճ վիճակում պահել աշակերտների շարժը: | | | |
| 5. | Դպրոցում եղած գույքը աշխատողների և ծնողների օգնությամբ վերանորոգել և տեղադրել մասնաշենքում: | | | |
| 6. | Դպրոցի մասնաշենքերը մասնակի վերանորոգում կատարելու, պատշաճ տեսքի բերելուց հետո, հնարավորության սահմաններում կահավորել նոր գույք սարքավորումներով, դպրոցի բյուջեի տնտեսված միջոցների հաշվին: | | | |
| 7. | Մինչև 25.08.2022թ. հրավիրել նախորդ ուստարվա առարկայական մեթոդմիավորումների նախագահներին, ինչպես նաև փոխտնօրեններին և համաձայնեցնելով նրանց հետ՝ վերջնական տեսքի բերել 2022-2023 ուստարվա դասաբաշխում՝ հաշվի առնելով դպրոցում հնգօրյա ուսումնական շաբաթով աշխատելու: | | | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | 30.08.2022թ. մանկխորհրդի նիստին ներկայացնել բոլոր առարկայական մեթոդմիավորումներին, դասվար-դասղեկներին, այնուհետև նրանց հրամանագրել: | | | |
| 9. | Մինչև 05.09.2022թ. հանձնարարել ԴԱԿ-ին դպրոցի գրադարանի ֆոնդի 2016-2021 ուստարում երաշխավորված դասագրքերը բաժանել աշակերտներին, ստանալ նոր դասագրքեր 12-ամյա կրթության դասարաններում: | | | |
| 10. | 2007-2015թ. վարձույթով տրված համապատասխան դասարանների դասագրքերը և համապատասխան առարկաների ուսուցչի ձեռնարկները, որպես 2022-2023 ուստարվա երաշխավորված դասագրքեր, պատվիրել համապատասխան քանակությամբ՝ բանկում այդ գրքերի համար չորս տարիներին հավաքած գումարների շրջանակներում, իսկ գործածությունից դուրս եկած վերոհիշյալ դասագրքերը գրադարանի ֆոնդից դուրս գրել: | | Ռ. Մարտիրոսյան | |
| 11. | Հանձնարարել բոլոր դասվար դասղեկներին իրենց վստահված աշակերտական հանդերձանքը վերանորոգված վիճակում ստանալու և ուսումնական տարվա վերջում նույնպիսի վիճակում հանձնելու համար տալ համապատասխան ստացականներ: | Մինչև 08.09.2022թ. | Օ. Մարտիրոսյան<br>Ա. Ռստակյան<br>Լ. Մամիկոնյան<br>Գ. Ալեքսանյան | |
| 12. | Հանձնարարել բոլոր մեթոդմիավորումների նախագահներին մինչև 08.09.2022թ. հրավիրել առարկայական մասնախմբերի երկրորդ նիստերը, հաստատել տարեկան իրենց աշխատանքային պլանները, նոր դասագրքերի և ծրագրերի համապատասխան թեմատիկ պլանները, իրենց կարծիքները ներկայացնել 2022-2023 ուստարվա երաշխավորված հիմնական դասագրքերի մասին, դժվար ըմբռնելի թեմաների շուրջը կազմակերպել կոնսուլտացիաներ, ծանոթանալ | Մինչև 08.09.2022թ. | Ա. Ռստակյան<br>Ա.Բալասանյան<br>Լ. Մամիկոնյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ՀՀԿԳՄՍՆ 2022-2023 ուստարվա նորություններին: | | | |
| 13. | Հրավիրել արդեն հրամանագրված առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն և հրահանգավորել, օգնել իրենց տարեկան աշխատանքային պլանները կազմելու ուղղությամբ, հարցեր դնել, որոնք բխեն 2021-2022 ուստարվա դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից և դպրոցի բարեփոխումների ծրագրից: | 28.08.2022թ. | Ռ. Մարտիրոսյան | |
| 14. | Աշխատանքային պլաններում նախատեսել փորձնական բաց դասեր: Երիտասարդ և սկսնակ ուսուցիչներին օգնելու և ստաժավորման ուղղությամբ միջոցառումների պլանի համապատասխան ստեղծել համեմատաբար հարուստ փորձ ունեցող և ատեստավորված ուսուցիչների ցուցակ, որոնք ուստարվա ընթացքում համապատասխան օգնություն ցուցաբերեն իրենց կցված սկսնակ ուսուցիչներին: | Մինչև 28.08.2022թ. | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան | |
| 15. | 2022-2023 ուստարում դպրոցից դպրոց փոխադրման, ինչպես նաև 12-րդ դասարանի ընդունելության նպատակով առաջնորդվել ԿԳ Նախարարության սահմանած համապատասխան կարգով, որը նշված է 2004թ.-ի << Հանրակրթական հաստատության տնօրենի տեղեկատու>>-ում: | Ուստարվա ընթացքում | Ռ. Մարտիրոսյան | |
| 16. | 2022-2023 ուստարում հիմք ընդունելով փաստացի ուսուցիչների և աշակերտների թվաքանակը և ուսումնադաստիարակչական աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու նպատակով ձևավորել ներքոհիշյալ առարկայական մեթոդմիավորումները<br>Հայոց լեզու և գրակ, ռ. Լեզու, օ. Լեզու, պատմություն, հասարակագիտություն, աշխարհագրություն, ՀԵՊ | 18.08.2022թ-28.08.2022թ. | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 1) Լ. Մամիկոնյան<br>2) Ա. Քոչարյան<br>3) Վ. Մեսրոպյան<br>4) Ս.Մամուլյան<br>5 ) Ա.Ալեքսանյան<br>Մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ֆիզկուլտուրա, ՆԶՊ<br>1) Ա.Բալասանյան - նախագահ<br>2) Մ. Գրիգորյան<br>3) Մ. Սիմիկյան<br>4) Ռ. Մուքիասյան<br>5) Ա▯Ալեքսանյան<br>6) Մ. Հունանյան<br>Տարրական, տեխնոլոգիա, կերպարվեստ, երգ-երաժշտություն<br>1) Ա. Ռստակյան- նախագահ<br>2) Օ. Մարտիրոսյան<br>3) Գ. Ալեքսանյան<br>4) Ք. Դիլբարյան | | | |
| 17. | ✓ 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի համաձայն, կազմակերպել և անցկացնել օրինակելի և փորձի փոխանակման բաց դասեր, յուրաքանչյուր մեթոդմիավորում լսել 3-4 ուսուցչի առարկայական-մասնագիտական զեկուցումներ, անցկացնել հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի, տարրական դասարանների, մաթեմատիկայի, անգլերեն լեզվի, պատմության, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի առարկայական շաբաթներ:<br>✓ Կիսամյակը մեկ անգամ տնօրինության կողմից կազմակերպել ստուգողական գրավոր աշխատանքներ հայոց լեզվից, մաթեմատիկայից, անգլերենից, պատմությունից, | 2022-2023ուստարվա ընթացքում | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան<br>Ս. Մամուլյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կենսաբանությունից, ֆիզիկայից, քիմիայից և արդյունքները զեկուցել մանկավարժական խորհրդի նիստում:<br>✓ Յուրաքանչյուր մեթոդմիավորման նիստում քննարկել <<Կրթություն>> թերթում տպագրված այն հոդվածները, որոնք կապված են 2022-2023 ուստարվա բարեփոխումների ծրագրերի հետ, առաջավոր փորձը մասսայականացնել, արձագանքել համապատասխան հոդվածներին:<br>✓ Կազմակերպել փոխադարձ դասալսումներ, քննարկել նիստերում:<br>✓ Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից 2 շաբաթ առաջ ստուգել ծրագրային նյութերը, չկատարման դեպքում հնարավորություն ստեղծել պակասը լրացնելու: | | | |
| 18. | Պլանավորել և հետևողական աշխատանք տանել ըստ բնակության վայրի երեխաների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների ուղղությամբ, պարտուցից դուրս մնացած երեխաներին ընդգրկել համապատասխան դասարաններ: | 03.08.2022թ<br>28.08.2022թ. | Ս. Մամուլյան | |
| 19. | Ավելի ակտիվացնել և բազմաբովանդակ դարձնել դպրոցում գործող դաստիարակչական խորհուրդների և ծնողական խորհրդի գործունեությունը: | 2022 -2023, ուստարվա ընթացքում | Ս. Մամուլյան | |
| 20. | Առաջնորդվել 2022-2023 ուստարվա պլանով, ինչպես նաև դպրոցական պարտադիր ժամաքանակների բաշխումը մանկավարժական խորհրդի որոշմամբ և մասնախմբերի ներկայացմամբ հատկացնելուց հետո օրինակելի ուսումնական պլանը տեղայնացնել և հաստատել | Օգոստոս 2022թ. | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մանկավարժական խորհրդի օգոստոսի 30-ի նիստում: | | | |
| 21. | 2022-2023 ուսումնական տարվա ձմռան նախապատրաստական աշխատանքներում մեծ տեղ հատկացնել պոլիէթիլեն ձեռք բերելուն, ստեղծել հակահրդեհային պայմաններ, ձեռք բերել կրակմարիչներ կամ վերալիցքավորել եղածները: | 2022-2023 ուստարվա ընթացքում | | |
| 22. | Ակտիվ մասնակցություն ցուցաբերել դպրոցականների տարածքային, մարզային, հանրապետական օլիմպիադաներին և սպորտային միջոցառումներին, խթանել, որպեսզի դրանք անցկացվեն ժամանակին և բովանդակալից: | 03.11.2022թ. | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան<br>Ա. Ալեքսանյան<br>Լ. Մամիկոնյան<br>Ա. Ալեքսանյան | |
| 23. | Հատկացված սպորտային գույք-սարքավորումներին ավելացնել և դպրոցի բյուջեով նախատեսված համապատասխան հոդվածից ևս ֆինանսներ տրամադրել առաջին անհրաժեշտության սարքավորումներ ձեռք բերելու համար: | 10.09.2022թ. - 10.10.2022թ | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Ալեքսանյան | |
| 24. | Գործածության մեջ դնել հիմնական դասամատյանները: | սեպտեմբեր | Ա. Բաղալյան | |
| | Գլուխ 3<br>Գաղափարական աշխատանք | | | |
| 1. | Անցկացնել զրույց- զեկույցներ հետևյալ թեմաներով.<br>*V դասարան-*<br>✓ *<<Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր>>*<br>✓ *<<Ինչ է ընկերությունը և բարեկամությունը>>*<br>✓ *<<Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը>>*<br>*IX-XII դասարաններ*<br>✓ *<<Ինչ է պատասխանատվության զգացումը>>*<br>✓ *<<Արտագաղթը չարիք է >>*<br>Նախապատրաստել և բովանդակալից անցկացնել ՀՀ անկախության 30 ամյակին նվիրված միջոցառում: X-XII կազմակերպել հարց ու պատասխանի քննարկումներ | 2022թ. I կիսամյակ<br><br>21.09.2022թ. | Մեթոդմիավորման նախագահներ, Դասվարներ<br><br>Ս. Մամուլյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ✓ <<Եթե ես երկրի վարչապետ լինեի>><br>✓ <<Հայաստան, իմ հայրենիք>><br>Կազմակերպել բաց դասեր՝ նվիրված Հայաստան աշխարհի նորօրյա խնդիրներին.«Դասղեկի ժամ» դասաժամերի միջոցով: | | | |
| 2. | Բացել <<Ծխելու վնասակար ազդեցությունները>> վահանակ, դասղեկի ժամեր, ծնողների և աշակերտների տարվող զրույցներ, միջոցառումներ: | Ուստարվա ընթացքում | Աշխորհուրդ | |
| 3. | Անցկացնել միջոցառումներ աշակերտների առարկայական պատրաստվածությունը, աշխատասիրությունը, ստեղծագործական միտքը զարգացնելու նպատակով: | 2022-2023ուստարի | Ա. Բաղալյան<br>Լ. Մամիկոնյան,<br>Առարկայական մասնախմբի նախագահներ | |
| 4. | Ամփոփել դպրոցականների առարկայական օլիմպիադաների առաջին փուլի արդյունքները և երկրորդ փուլի մասնակիցների ցուցակը ներկայացնել մարզպետարանի կրթության վարչություն: | Դեկտեմբեր | Ա. Բաղալյան<br>Առարկայական մասնախմբի նախագահներ | |
| 5. | Անցկացնել դասղեկի ժամեր <<Ցեղասպանության 107 տարի >> թեմայով:<br><br>Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի հատվածների ընթերցում:<br>«Աշնան արև» ֆիլմի դիտում , քննարկում:<br><br>Աշակերտների հետ անցկացնել բանավեճ <<Ճանաչում և հատուցում>> թեմայով:<br><br>Կազմակերպել զրույցներ՝ <<Ցեղասպանությունն իմ աչքերով>> և <<Հայոց ցեղասպանությունն ու հայ վրիժառուները>> թեմայով:<br><br>Կազմակերպել բաց դաս՝ <<Եղել ենք, կանք ու կլինենք>> թեմայով:<br><br>Սրակյանրնթերցումներ: | Հունվար<br><br>Փետրվար<br><br>Մարտ<br><br>Մարտ<br><br>Մարտ<br><br>Ապրիլ | Դասղեկներ<br><br>Լ. Մամիկոնյան<br><br>Լ. Մամիկոնյան<br><br>Ա.Ալեքսանյան<br><br>Ա.Ալեքսանյան<br><br>Լ. Մամիկոնյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Աշակերտների մասնակցությամբ անցկացնել դպրոցական հուշ-ցերեկույթ՝ նվիրված Եղեռնի 107 ամյակին ու անմեղ զոհերի հիշատակին <<Գարուն ա, ձյուն ա արել>> ընդհանուր խորագրով: | Ապրիլ | Ա.Ալեքսանյան<br><br>Լ. Մամիկոնյան | |
| | **Գլուխ 4**<br>**Իրավագիտության ձևավորում:**<br>**Քաղաքացիական ակտիվության դաստիարակություն** | | | |
| 1. | Բարձր դասարանների աշակերտների հետ կատարել համապատասխան աշխատանքներ ընտանեկան կյանքին և աշխատանքին նախապատրաստվելու նպատակով: | Ուստարի | Ս. Մամուլյան | |
| 2. | Հայտարարել Պ.Սևակի ստեղծագործությունների ուսումնասիրությունների շաբաթ/ IX-XII դասարանների համար/: Կազմակերպել պոեզիայի ժամ՝ «Նորագուն շրջանի հայ բանաստեղծներ» թեմայով: Կազմակերպել գրքային հրատարակում՝ «Խաղաղ ապրենք աշխարհում» վերնագրով: | Սեպտեմբեր 2022թ. | Ա. Բաղալյան<br>Լ. Մամիկոնյան | |
| 3. | Անցկացնել «Հայ նշանավոր հեքիաթագիրների հետ» խորհագրով շաբաթ V-VIII դասարաններում, մայրենի դասաժամերին: | Հոկտեմբեր 2022թ. | Լ. Մամիկոնյան<br>Տ.Հակոբյան | |
| 4. | Բանավեճ՝ <<Կարգապահությունը ազատությո՞ւն է, թե՞ անհրաժեշտություն>>/IX-XII դասարաններ/: | Նոյեմբեր 2022թ. | Դասղեկներ | |
| 5. | Անցկացնել զրույցներ և հանդիպումներ իրավապահ անձանց հետ: Կազմակերպել միջոցառում՝ նվիրված ճանապարհային երթևեկության կանոններին: | Ուստարի | Ս. Մամուլյան<br>Մ. Հունանյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գլուխ 5<br>Կուլտուր- մասսայական և սպորտային աշխատանք, ռազմահայրենասիրական դաստիարակություն: | | | |
| 1. | Ստեղծել համձնաժողով դպրոցի անապահով աշակերտներին ցուցակագրելու և նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունք ցույց տալու նպատակով /անվճար դասագրքեր/: | Սեպտեմբեր | Ռ. Մարտիրոսյան | |
| 2. | Ջգտել, որպեսզի աշակերտության գերակշիռ մասը ընդգրկվի որևէ արտադպրոցական խմբակում, կազմել նրանց ցուցակները, ըստ ծնողների դիմումների և հաճախումների գրաֆիկների: | Սեպտեմբեր, ուստարի | Ս. Մամուլյան | |
| 3. | Հանդիսությունների դահլիճում աշխուժացնել դպրոցական միջոցառումների աշխատանքները: | Ուստարի | Ս. Մամուլյան<br>Դասղեկներ<br>Աշխորհուրդ | |
| 4. | Պատրաստել վահանակ <<Հիշում եմ և պահանջում>> նվիրված Մեծ Եղեռնի հիշատակի 107- ամյակին: | I կիսամյան | Աշխորհուրդ | |
| 5. | Հաստատել ավանդական տոների և դեկտեմբերի 7-ին, ապրիլի 24-ին նվիրված միջոցառումների գրաֆիկը, նշել Հայոց բանակի օրը և հետևել, որ դրանք անցկացվեն ժամանակային և հարուստ բովանդակությամբ: | Ուստարի | Ս. Մամուլյան<br>Մ. Հունանյան | |
| 6. | 2022-2023 ուստարվա վերջում և ուստարին ավարտելուց հետո հնարավորություն տալ դասարաններին կազմակերպել էքսկուրսիաներ: | Ուստարվա վերջ | Մանկավարժական կոլեկտիվին, տնօրինություն | |
| 7. | Զրույցներ օլիմպիադայի պատմությունից <<Հայ օլիմպիականները>>, <<Օլիմպիական քաղաքներ>>, մասնակցել <<Մեղու>>, <<Կենգուրու>> մրցույթներին, անցկացնել արտադասարանական պարապմունքներ մաթեմատիկայից, հայոց լեզվից: | Ուստարի | Ռ. Մարտիրոսյան | |
| | | | | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գլուխ 6<br>Բարոյական և հոգևոր դաստիարակություն | | | |
| 1. | Կատարել բազմաբնույթ աշխատանք աշակերտների մեջ բարոյական բարձր հատկանիշներ, ակտիվ կենսադիրքորոշում ձևավորելու, համակողմանի զարգացմանը նպաստելու համար: | ուստարի | Ս. Մամուլյան | |
| 2. | Մասնակցել դասղեկական ժամերին<br>✓ Ծանոթանալ աշակերտներին, նրանց վարքագծին<br>✓ Պարզել դպրոցի և ուսման նկատմամբ նրանց վերաբերմունքը<br>✓ Պարզել աշակերտ- դասղեկ փոխհարաբերությունները՝ անհատական մոտեցման և տարիքային առանձնահատկությունների հաշվման ուղղությամբ<br>✓ Լսել աշակերտների և դասղեկների առաջարկությունները, ցանկությունները: | Ուստարի | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան | |
| 3. | Աշակերտներին մշտապես տեղյակ պահել հանրապետության քաղաքական , հոգևոր կյանքում կատարվող իրադարձություններին: | Ուստարի | Ս. Մամուլյան<br>Դասղեկներ | |
| 4. | Պարբերաբար թարմացնել <<Մեր գյուղը>>, <<Մեր գերազանցիկները>>, <<Մեր դպրոցի առօրյան>>, <<Առողջ ապրելակերպ>>, <<Մեր գերազանցիկները>>, <<Ռազմագիտությունը դպրոցում>> վահանակի նյութերը: | ուստարի | աշխորհուրդ | |
| 5. | Սաների մեջ դաստիարակել խնայողություն, տնտեսվարություն, պատասխանատվության զգացում: | ուստարի | Դասղեկներ | |
| 6. | Սովորողների շրջանում մասսայականացնել հայ ազգային և եկեղեցական տոներն ու սովորությունները, հիշատակի օրերն ու ավանդական տոները | | Դասղեկներ | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ✓ Նավասարդ- օգոստոսի 11<br>✓ ՀՀ անկախության հռչակագրի ընդունման օր – օգոստոսի 23<br>✓ Խաչվերաց- սեպտեմբեր<br>✓ Մուսա լեռան հերոսական պաշտպանության օր- սեպտեմբերի 18<br>✓ ՀՀ Անկախության օր- սեպտեմբերի 21<br>✓ 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակի օր- դեկտեմբերի 7<br>✓ Ամանոր, Սուրբ ծնունդ- դեկտեմբեր<br>✓ Հայկական բանակի վերածննդի օր- հունվարի 28<br>✓ Տեառնընդառաջ- փետրվարի 14<br>✓ Մայրության և գեղեցկության տոն- ապրիլի 7<br>✓ Սուրբ Զատիկի օր-մարտ, ապրիլ<br>✓ Մեծ Եղեռնի հիշատակի օր- ապրիլի 24<br>✓ Խաղաղության օր-մայիսի 9<br>✓ Ավարայրի ճակատամարտի օր- մայիսի 26<br>✓ Հայկական պետականության վերածննդի օր- մայիսի 28<br>✓ Վարդավառ-հուլիս | | | |
| 7. | Հետևել, որ դաստիարակչական ժամերին դաստիարակները մեծ տեղ հատկացնեն կրոնական թեմայով հարցազրույցներին, օգնեն աշակերտներին ճիշտ կողմնորոշվել: | Ուստարի | Ս. Մամուլյան | |
| 8. | Ծանոթացնել ժողովրդի վարքերին ու բարքերին: | | | |
| | **Գլուխ 7**<br>**Հայրենասիրության դաստիարակությունը** | | | |
| 1. | Եվ դասերի ընթացքում, և կրթադաստիարակչական նպատակ հետապնդող միջոցառումներ անցկացնելիս կատարել նպատակային աշխատանք ազգային ոգին, հպարտությունը դաստիարակելու ուղղությամբ: | Ուստարի | Դասղեկներ | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Անցկացնել զրույցներ, ցերեկույթներ հայ ազգային- ազատագրական պայքարի պատմության և նրա հերոսական անվան շուրջ, արցախահայության պայքարի անցյալի և ներկայի մասին: | 2023թ. մայիսի I և II շաբաթներ | Ա.Ալեքսանյան | |
| 3. | Հասնել այն բանին, որ կրթօջախի յուրաքանչյուր աշակերտ իմանա ՀՀ օրհներգը: | Ուստարիր | Դասղեկներ | |
| 4. | Կազմակերպել աշակերտների այցելություն մարտական փառքի թանգարան, հայ ժողովրդի պատմության նշանավոր ճակատամարտերին նվիրված հուշահամալիրներ: | Ուստարվա վերջին | Ս. Մամույան Դասղեկներ | |
| 5. | Բանավեճ՝ <<Ի՞նչ եմ հասկանում հայրենասիրություն ասելով>>: | Մայիս | Մ. Հունանյան | |
| 6. | Հայրենասիրական պոեզիայի փառատոն 1-4-րդ և 5-9 –րդ դասարանների միջև: | Մայիս | Լ. Մամիկոնյան | |
| | Գլուխ 8<br>Գեղագիտական և վարքի հիմունքների դաստիարակում | | | |
| 1. | Կազմակերպել, ղեկավարել դասասենյակների ձևավորման, դասարանային գույքի պահպանման աշխատանքները: | Ուստարի | Ռ. Մարտիրոսյան Դասղեկներ | |
| 2. | Յուրաքանչյուր տարի ընտրել կրթօջախի լավագույն դասղեկին, ներկայացնել պարգևատրման: | Ուստարի | Ռ. Մարտիրոսյան Ա. Բաղայան | |
| 3. | Աշակերտների հետ անցկացնել զրույցներ վարվեցողության, մարդկային հարաբերությունների, ընտանիքի, օրենքի և վարքի նորմերի մասին: | Ուստարի | Ս. Մամույան Դասղեկներ | |
| 4. | Աշակերտական ստեղծագործական զարգացման և շնորհալիներին հայտնաբերելու նպատակով անցկացնել ներդպրոցական ստեղծագործական աշխատանքների մրցույթներ, լավագույններին խրախուսել: Մասնակցել շնորհալիների մարզային մրցույթներին: | Ուստարի | Ս. Մամույան Դասղեկներ | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | Արվեստի նկատմամբ առանձնալի հետաքրքրություն ցուցաբերող, նրանով հրապուրվող և օժտված երեխաների նկատմամբ լինել ուշադիր, հոգատար: Օգտագործել նրանց ուժերը միջոցառումներ կազմակերպելիս: | | | |
| 6. | Անցկացնել ավանդական տոներ և հիշատակի օրեր <<Առաջին զանգ>>, ՀՀ Անկախության օր, երկրաշարժի զոհերի հիշատակի օր, Ամանոր և Սուրբ Ծնունդ, Հայկական բանակի օր, Մայրության և գեղեցկության օր, զատիկ, աշխատանքի օր, երկրապահի օր, Հաղթանակի և խաղաղության տոն, Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման օր, <<Վերջին զանգ>>: | Ուստարի | Ռ. Մարտիրոսյան<br>Ս. Մամուլյան | |
| | **Գլուխ 9**<br>**Աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի դաստիարակում:** | | | |
| 1. | Կազմակերպել հանդիպումներ տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների հետ: | Մայիս | Ս. Մամուլյան | |
| 2. | Հանդիպում կլոր սեղանի շուրջ <<Երկխոսություն տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների հետ>>: | Ուստարի | Դասղեկներ | |
| 3. | <<Մենք ամեն ինչ անում ենք մեր ձեռքերով>> ակցիա դպրոցական կոտրված գույքը և գրադարանի գրքերը վերանորոգելու ուղղությամբ: Ձեռք բերել աշակերտական սեղաններ, աթոռներ, հանդիսությունների դահլիճի աթոռներ: | Ուստարի | Դասղեկներ<br>Ա. Բաղալյան<br>Ռ. Մարտիրոսյան | |
| | **Գլուխ 10**<br>**Կազմակերպչական խնդիրներ** | | | |
| 1. | Աշխատանք դասղեկների և ուսուցիչների հետ.<br>✓ Ըստ օրինական ուսպլանների կազմել տեղայնացված ուսպլան<br>✓ Առարկայական մասնախմբերում կատարված | Օգոստոս | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան<br>Ս. Մամուլյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դասաբաշխման հիման վրա դասացուցակի կազմում: | | | |
| 2. | Օգնել դասղեկներին՝ դաստիարակչական պլանների կազմման և կիրառության գործում: | Օգոստոս | Ա. Բաղալյան<br>Ս. Մամուլյան | |
| 3. | Դասամատյանների ստուգում յուրաքանչյուր ամիս: | Ուստարի | Ա. Բաղալյան | |
| 4. | Հաստատել դասղեկների աշխատանքային պլանները և հետևել դրանց իրականացմանը: Կազմակերպել ուսուցիչների թեմատիկ պլանների ստուգում, թերությունների վերացման վերաբերյալ առաջարկությունների քննարկում: | Սեպտեմբեր | Ա. Բաղալյան | |
| 5. | Կազմել աշակերտների և ուսուցիչների հերթապահության գրաֆիկ և վերահսկել կատարումը՝ ընդգրկելով աշակերտական ակտիվին: | Սեպտեմբեր | Ս. Մամուլյան | |
| 6. | Նախապատրաստել և անցկացնել աշակերտական ժողովներ, կատարել աշխորհրդի ընտրություններ: | Սեպտեմբեր | Ս. Մամուլյան | |
| 7. | Նախապատրաստել և անցկացնել դպրոցի աշխորհրդի անդամների հավաք, ընտրել դպրոցի աշխորհուրդը: | Մինչև 30.09.2022թ. | Ս. Մամուլյան | |
| 8. | Ըստ անհրաժեշտության հրավիրել դասղեկական խորհրդակցություններ և քննարկել կարևոր, հրատապ հարցերը: | Մինչև 23.09.2022թ. | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան | |
| 9. | Առարկայական մասնախմբերի նիստերի ժամանակ <<Կրթություն>> շաբաթաթերթում և այլ ամսագրերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ստացված նորություններին ծանոթացում և քննարկում: | Ամիսը մեկ անգամ | Ա. Բաղալյան | |
| 10. | Առաջին կիսամյակի դաստիարակչական աշխատանքների արդյունքների և հետագա խնդիրների մասին հաշվետվություն մանկավարժական խորհրդի նիստում: | Ամիսը մեկ անգամ | Ս. Մամուլյան | |
| 11. | Աշակերտական կոլեկտիվի համախմբման և ամրապնդման գործում դասղեկի դերի և այդ | 25.12.2022թ. | | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: | | | |
| 12. | Օգնել սկսնակ դասղեկներին դաստիարակչական բնույթի ահրցերում: | Ուստարի | Ս. Մամուլյան | |
| 13. | Կատարել դասալսումներ՝ ուսումնասիրելու ուսուցիչների կողմից իրականացվող դաստիարակչական բնույթի աշխատանքները: Ուշադրություն դարձնել առարկայական դրվածքին: | Ուստարի | Ռ. Մարտիրոսյան<br>Ա. Բաղալյան<br>Ս. Մամուլյան | |
| 14. | Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից 2 շաբաթ առաջ ստուգել ուսուցիչների թեմատիկ պլանի կատարողականը, տալ համապատասխան ցուցումներ թերությունների վերացման վերաբերյալ: | Ուստարի | Ա. Բաղալյան | |
| | Գլուխ 11<br>Ծնողխորհրդի աշխատանքների պլան | | | |
| 1. | Օգնել դասղեկներին՝ կազմակերպելու ծնողական խորհրդի գործունեությունը, ժամանակին հրավիրել ծնողական ժողովներ, ամրապնդել կապը դպրոցի և ծնողների հետ: | Ուստարի | | |
| 2. | Ունենալ դպրոցում թույլ սովորող աշակերտների ցուցակները և աշխատանք տանել նրանց ծնողների հետ: | Ուստարի | Ս. Մամուլյան<br>Դասղեկներ | |
| 3. | Դասղեկների հետ միասին ծանոթանալ <<դժվար>> դաստիարակվող երեխաների տնային պայմաններին՝ ուշադրության կենտրոնում պահել նրանց: | Շաբաթը մեկ անգամ | Ս. Մամուլյան<br>Դասղեկներ | |
| 4. | Ուսումնասիրել միակողմանի ծնողազուրկ, սոցիալապես անապահով երեխաների ընտանեկան պայմանները: Հնարավորության դեպքում կազմակերպել օգնություն: | Ուստարի | Ս. Մամուլյան | |
| 5. | Կատարել վերոհիշյալ աշակերտների հաշվառում, հաճախակի լինել նրանց ընտանիքներումկամ ծնողին հրավիրել դպրոց, գործնական | Ամիսը մեկ անգամ | Ս. Մամուլյան | |

Scanned by TapScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| | օգնություն ցույց տալ նրանց երեխաների դաստիարակության գործում: | | | |
| 6. | Ամիսը մեկ անգամ ծնողների համար կազմակերպել զեկուցում մանկավարժական թեմայով: Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներում: | Ուստարի | | |
| 7. | Դասղեկների հետ ուսումնասիրել ընտանիքներում երեխաների դաստիարակության դրվածքը և համապատասխան աշխատանք կատարել նրանց հետ: Ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը: Լսել առանձին ծնողների հաշվետվությունները իրենց պարտականությունների կատարման ուղղությամբ:<br>✓ Հաշվետվությամբ հանդես գալ ծնողխորհրդի նիստում<br>✓ Ծնողխորհրդին կից ստեղծել դպրոցին և ընտանիքին աջակցող հանձնաժողովներ: | Կիսամյակը մեկ անգամ | Ս. Մամուլյան | |
| 8. | Ծնողական խորհրդի կազմի վերընտրության ժամանակյ հաշվետվություն տալ կատարած աշխատանքների մասին: | Ուստարի | Ս. Մամուլյան | |

Scanned by TapScanner